## ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք.Գյումրի «  » օգոստոսի 2021 թ.

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանը՝ ի դեմս Գյումրի համայնքի ղեկավար Սամվել Միսակի Բալասանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամը՝ ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Հրահատ Ստեփանյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ ԿՈՂՄԵՐ) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Գյումրի քաղաքում ժամանակավոր կացարաններում բնակվող և տնազուրկ ընտանիքների բնակապահովման խնդիրների լուծում:

**Կողմերը՝**

- Գյումրու համայնքապետարանը «Անի» թաղամասում անհատույց հատկացնում է հողատարածք բազմաբնակարան շենք կառուցելու համար և տրամադրում է արտաքին ինժեներական ցանցերի կառուցման նախագիծ:
- Գյումրի համայնքից ընտրվում են շահառու ընտանիքներ՝ առաջնահերթ տալով քաղաքի կենտրոնական հատվածներում և կանաչ գոտիներում տեղադրված ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին:
- «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամը հատկացնում է բազմաբնակարան շենքի գումար նախագծման և շինարարության իրականացման համար: Ներդրվող գումարի 50 տոկոսը ընտանիքների համար անհատույց նվիրատվություն է լինելու, իսկ մյուս 50 տոկոսը ընտանիքները վերադարձնելու են հիմնադրամին անտոկոս փոխառության կարգով բնակարանամուտից հետո 10 (տասը) տարվա ընթացքում:
- Շինանյութերի գների էական բարձրացման կամ դրամի փոխարժեքի կտրուկ փոփոխության դեպքում կողմերը պարտավոր են քննարկել շինարարության ընդհանուր արժեքը:
- ԿՈՂՄԵՐԸ պայմանագրային հարաբերություններ են ստեղծում շահառուների հետ, որտեղ պետք է հստակեցվեն շինարարության ավարտից հետո առաջիկա 10 (տասը) տարվա ընթացքում կառուցված բնակարանները չօտարելու հարցը:

### 2.Կողմերի պարտականությունները եվ իրավունքները

**2.1 ԿՈՂՄԵՐԸ** պարտավորվում են՝

2.1.1 պատշաճ և ժամանակին կատարել սույն համաձայնագրի 1-ին կետում ստանձնած պարտավորությունները:

2.1.2 շինարարական աշխատանքներն սկսել փործնական մեկ մոդուլի համար՝առաջին գումարներն ստանալուց հետո 10 (տասը) տարվա ընթացքում:

2.1.3 ստացած գումարներն օգտագործել նպատակային, կազմակերպել բնակարանների կառուցման աշխատանքները՝ համաձայնեցված սկզբունքներին և գործող կարգի համապատասխան:

2.1.4 ապահովել թափանցիկությունը՝ գումարների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա:

3. **ԿՈՂՄԵՐԸ** ցանկացած ժամանակ իրավունք ունեն հիմնավորված պատճառաբանությամբ լուծել համաձայնագիրը՝ երկու ամիս առաջ տեղյակ պահելով միմյանց:

4. Եթե համաձայնագիրը լուծվում է, ապա **ԿՈՂՄԵՐՆ** իրավունք ունեն հետ պահանջել ներդրված գումարի չիրացված մասը:

5. **ԿՈՂՄԵՐԻ** միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնության չգալու դեպքում վեճերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

6. Սույն համաձայնագիրը կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7. Սույն համաձայնագրի 1-ին կետում նշված աշխատանքների ավարտ համարել 2030 թվականի դեկտեմբերի 30-ը:

## 3. Կողմերի իրավաբանական հասցեները

| | |
|---|---|
| Գյումրու համայնքապետարան | «ԱՌ-Ք» բարեգործական հիմնադրամ |
| Քաղ.Գյումրի, Վարդանանց հր. 1 | Քաղ.Երևան, Պ.Սևակի 9 |
| ՀՎՀՀ՝ 05511159 ԲանկՀՀՖՆ ԳՎ | ՀՎՀՀ՝ 00057312 Ինեկոբանկ |
| h/h 900216301029 | h/h 001-096775-001 |
| **Համայնքի ղեկավար՝** | **Գործադիր տնօրեն՝** |
| **Ս.Բալասանյան** | **Հ.Ստեփանյան** |